

Աշխատանքի առողջություն և անվտանգություն: Պարտականություններ Աշխատանքի առողջության և անվտանգության (WHS) օրենքների համաձայն

Աշխատանքի առողջության և անվտանգության օրենքները պարտադրում են գործատուներին հոգ տանել աշխատավայրի մարդկանց առողջության, անվտանգության և բարեկեցության համար: Սա ներառում է.

- ապահովել և պահպանել աշխատանքի միջավայր, որը առողջությանը և անվտանգությանը վտանգ չի սպառնում
- տրամադրել բավարար և մատչելի հարմարություններ աշխատողների բարեկեցության համար՝ իրենց աշխատանքը կատարելու համար, և
- վերահսկել աշխատողների առողջությունը և աշխատավայրի պայմանները՝ կանխելու հիվանդություն կամ վնասվածք:

Պարտականություն աշխատողների հանդեպ

Դուք ունեք պարտականություն ապահովելու ձեր աշխատողների առողջությունը և անվտանգությունը: Դուք պետք է վերացնեք COVID-19-ին ենթարկվելու վտանգը, կամ, եթե դա հնարավոր չէ, դուք պետք է նվազեցնեք վտանգը հնարավորինս շատ:

Պաշտպանեք աշխատողներին COVID-19-ին ենթարկվելու վտանգից, օրինակ՝

- իրականացնելով աշխատանք տնից կարգադրություններ
- պահանջելով, որ աշխատողները պահպանեն ֆիզիկական հեռավորություն և պատշաճ հիգիենա
- պահանջելով, որ աշխատողները մնան տանը, եթե հիվանդ են, և
- մաքրելով աշխատավայրը պարբերաբար և մանրակրկիտ:

Պարտականություն աշխատավայրի այլ մարդկանց հանդեպ

Դուք պետք է ապահովեք, որ ձեր բիզնեսի աշխատանքը չսպառնա այլ մարդկանց, օրինակ՝ հաճախորդների, պատվիրատուների, այցելուների, կյանքին և անվտանգությանը:

Պաշտպանեք ուրիշներին COVID-19-ին ենթարկվելու վտանգից, օրինակ՝ պահանջելով, որ նրանք.

- պահպանեն ֆիզիկական հեռավորություն, ներառյալ առանց շփման առաքումներ և վճարումներ
- պահպանեն պատշաճ հիգիենա, և
- չգան աշխատավայր, եթե անհրաժեշտ չէ:

Պարտականություն աշխատավայրը և հարմարությունները պահպանելու համար

Դուք պետք է պահպանեք ձեր աշխատավայրը՝ ապահովելու համար, որ աշխատանքի միջավայրը աշխատողներին և մյուսներին չի ենթարկում COVID-19 հիվանդությամբ վարակվելու վտանգին:

Պահպանեք ապահով աշխատաքի միջավայր, օրինակ՝

- մաքրելով աշխատավայրը պարբերաբար և մանրակրկիտ
- փոխելով աշխատավայրի դասավորությունը՝ թույլ տալու համար ֆիզիկական հեռավորություն, և
- սահմանափակելով աշխատավայրում մարդկանց թիվը:

Դուք պետք է նաև տրամադրեք համապատասխան հարմարություններ ձեր աշխատավայրում, ներառյալ՝

- ձեռքերը լվանալու միջոցներ օճառով, ջրով և թղթե սրբիչով
- ձեռքերի ախտահանիչներ, եթե հնարավոր չէ, որպեսզի աշխատողները լվանան ձեռքերը, և
- աշխատակազմի համար սենյակներ, որոնք մաքուր են և ունեն ֆիզիկական հեռավորության հնարավորություն

Աշխատողներին տրամադրեք պարբերաբար ընդմիջումներ՝ հարմարություններից օգտվելու համար՝ հատկապես ձեռքերը լվանալու համար:

Պարտականություն տեղեկատվություն, ուսուցում, հրահանգներ և վերահսկողություն տրամադրելու համար

Դուք պետք է տրամադրեք ձեր աշխատողներին տեղեկատվություն կամ ուսուցում, որը անհրաժեշտ է իրենց պաշտպանել իրենց աշխատանքում COVID-19-ին ենթարկվելու վտանգից:

Սա կարող է ներառել.

- ցուցում ձեռքերը պատշաճ լվանալու համար
- ուսուցում, թե ինչպես տեղադրել և օգտագործել ցանկացած անհրաժեշտ անձնական պաշտպանիչ սարքավորումներ
- ուսուցում, թե ինչպես և երբ մաքրել
- հրահանգներ, թե ինչպես ստեղծել ապահով աշխատավայր տանը, և
- հրահանգներ, որպեսզի մնան տանը, եթե հիվանդ են:

Պարտականություն խորհրդակցելու համար

Դուք պետք է խորհրդակցեք աշխատողների հետ առողջության և անվտանգության COVID-19-ի հետ կապված հարցերով և հնարավորություն ընձեռեք աշխատողներին արտահայտելու իրենց տեսակետները և մտահոգությունները: Հաշվի առեք նրանց տեսակետները և տեղեկացրեք աշխատողներին խորհրդակցության արդյունքի վերաբերյալ:

Խորհրդակցեք աշխատողների հետ, երբ դուք.

- իրականացնում եք ռիսկի գնահատում
- որոշումներ եք կայացնում հսկողության միջոցառումներ վերաբերյալ ռիսկերը կառավարելու համար, օրինակ՝ ներմուծում եք տնից աշխատելու կարգադրություններ, կամ սահմանափակում եք աշխատավայրը՝ ապահովելու համար ֆիզիկական հեռավորություն
- որոշումներ եք կայացնում աշխատավայրի հարմարությունների վերաբերյալ, և



- առաջարկում էք այլ փոփոխություններ, որոնք կարող են ազդել աշխատողների առողջության և անվտանգության վրա:

Դուք պետք է հետևեք բոլոր պայմանավորված խորհրդակցության ընթացակարգերին: Եթե կան առողջության և անվտանգության ներկայացուցիչներ, դուք պետք է ընդգրկեք նրանց խորհրդակցության մեջ:

Լրացուցիչ տեղեկություններ

COVID-19-ի և աշխատանքի առողջության և անվտանգության վերաբերյալ լրացուցիչ տեղեկությունների համար, այցելեք Անվտանգ աշխատանք Ավստրալիա կայքը [Safe Work Australia website](#).